ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
**PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI**

ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1 , 403 սենյակ
*հեռ (+374) 25324114, 91199324*
*էլ. փոստ info_alaverdi@aarhus.am*
*anushevoyan@rambler.ru*

*Lori, Alaverdi,*
*Zoravar Andranik str.8/1, 403*
*Tel. (+374) 25324114, 91199324,*
*E-mail info_alaverdi@aarhus.am*
*anushevoyan@rambler.ru*

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների
Նախարար պարոն
Երվանդ Զախարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել Ախթալայի ԼՀԿ –ի կողմից շահագործվող հանքավայրին առնչվող հետևյալ փաստաթղթերի պատճենները

1. կատարվե՞լ է հանքի պաշարների վերագնահատում, կոնդիցիոն ցուցանիշների փոփոխություն
2. տեղեկատվություն լցակույտերի վերաբերյալ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝
Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող Անուշ Էվոյան

27.04.2015թ.